



ԵՐԿՈՒՆԱԲԹԻ, 13 ՓԵՏՐՈՒԱՐ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 21

### ՕՐՀՆԵՐԳ ԹԱԳԱԻՈՐԻՆ ԳԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

**Տ**էր, քու պարգեւած զօրութեամբդ, ուրախ պիտի ըլլայ թագաւորը,  
եւ պարգեւած յաղթանակովդ մեծապէս պիտի ցնծայ:  
Անոր սրտին փափաքը կարարեցիր, եւ ջներժեցիր անոր խնդրանքը:  
Տէր, օրհնութեանդ բարիքներով դիմաւորեցիր թագաւորը,  
եւ զուր ոսկիէ թագ դրիր անոր գլխուն:  
Քեզմէ կեանք խնդրեց, եւ անոր երկար օրեր փութի, եւ փութի աւելիով:  
Քու պարգեւած յաղթանակովդ բարձրացուցիր անոր փառքը,  
վայելչութիւն ու պարիս փութի անոր.  
օրհնութիւններդ անոր վրայ մշտական դարձուցիր,  
եւ քու ներկայութեանդ ուրախութեամբը լեցուցիր:  
Որովհետեւ թագաւորը Տիրոջ վարահեցաւ,  
Բարձրեալին ողորմութեամբը պիտի չասանի:  
Ով թագաւոր, քու ձեռքդ պիտի հասնի բոլոր թշնամիներուդ,  
քու զօրութեամբդ պիտի բռնես քեզ պտղները:  
Զանոնք բոցավառ թոնիրի պիտի վերածես երբոր յայտնուիս:  
Տէրը իր բարկութեամբը զանոնք պիտի կլլէ, եւ կրակը պիտի սպառէ զանոնք:  
Անոնց ծնունդները պիտի վերցնես աշխարհէն,  
անոնց սերունդը պիտի բնաջնջես մարդկութեան մէջէն,  
որովհետեւ քեզի դէմ չարութիւն խորհեցան,  
քեզի դէմ դաւ նիւթեցին, բայց պիտի չյաջողին:  
Քու նետերդ անոնց դէմ պիտի արձակես,  
եւ անոնք կռնակ պիտի դարձնեն ու փախչին:  
Ել Տէր, ցոյց փութի զօրութիւնդ, եւ մենք երգով ու նուագով պիտի ներբողենք հզօր գործերդ:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՁ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
*աջ թո՛ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի քննապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ թո՛ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ՕՐՀՆԵՐԳ ԹԱԳԱԲՈՐԻՆ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

20-րդ Սաղմոսին շարունակությունն է այս Սաղմոսը: Այս Սաղմոսը Աստուծոյ շնորհակալութիւն յայրնելու Սաղմոս է: Այս Սաղմոսին մէջ կը կարդանք նաեւ թէ ինչու պէտք է Աստուծոյ շնորհակալութիւն յայրնել: Աստուծոյ փրկած կամ բերած փրկութեան համար, թագաւորին ճամբով: Նախորդին մէջ, խնդրանք էր առ Աստուած, որ Աստուած լսէ թագաւորին աղօթքը, թող պաշտպան ըլլայ անոր, սրբին համեմատ փայ, ու անոր փափաքները կատարէ: Եւ արդէն, այս Սաղմոսը ցոյց կու տայ, թէ ինչպէս Աստուած պատասխանեց թագաւորին աղօթքին, երբ 2-րդ համարը կ'ըսէ. «Անոր սրբին փափաքը կատարեցիր, եւ չմերժեցիր անոր խնդրանքը»: Այս փողերը ցոյց կու տան, թէ Աստուած կը պատասխանէ եղեր աղօթքներուն, այնպէս չէ որ աղօթքները անպատասխանի կը մնան: Նախ ըսենք, որ բոլոր աղօթքներն ալ լսելի են, բայց բոլոր աղօթքները չեն որ կը պատասխանուին: Ուրկէ գիտենք, որ աղօթքները լսելի են: Երբ Դաւիթ կ'անդրադառնայ ըսելով, ով անմիտ երբ Արարիչը քեզի ականջ փութեր է, ուրեմն կը լսէ: Ուրեմն աղօթքները լսուիլը մէկ բան է, իսկ աղօթքները պատասխանուիլը մէկ այլ ուրիշ բան: Այս պարագային, Աստուած կը պատասխանէ: Ե՛րբ է որ Աստուած կը պատասխանէ: Երբ այդ աղօթքները Իր կամքին համաձայն են, եւ մեր բարիքին համար: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի ըսէ. «Դուք որ չար էք, եւ գիտէք լաւ պարգեւներ փայ ձեր գաւակներուն, որքան առաւել եւս ձեր երկնաւոր Հայրը»: Ուրեմն, երբ մեր ալ աղօթքները Աստուծոյ կամքին համաձայն են, այս պարագային դարձեալ Աստուծոյ կամք հասկացողութիւնը այն է, մեր հոգիներու փրկութիւնը: Այնքան ապրեն, որ մեր խնդրանքները կը համապատասխանեն մեր հոգիներու փրկութեան, այնքան ապրեն, որ մեր աղօթքները չեն խաղարեր մեր հոգիներու փրկութեան, Աստուած ոչ միայն կը լսէ, այլ նաեւ կը կատարէ:

Ահա թագաւորը ոչ միայն պիտի ուրախանայ, այլ նաեւ առաւել եւս պիտի ցնծայ: Կրկնակի ուրախութիւն, Աստուծոյ պարգեւած գորութեամբը, յաղթանակով ու փրկութեամբը: Յաճախ մենք ալ, Աստուծոյ վստահելով, դուրս եկած ենք, նեղութենէ մը, դժուարութենէ մը, ուր Աստուծոյ ապանելով եւ վստահելով, անդրադարձած ենք, որ Աստուած մեզ դուրս բերաւ այդ կացութենէն, որքան մեզ ուրախութիւն ու ցնծութիւն պատճառած է, որքան առաւել եւս, երբ այս անգամ կ'անդրադառնանք որ Աստուած մեզ դուրս բերած է մեղքի սարկութենէն, մահուան վճիռէն, ու մեզի նոր կեանք պարգեւած է: Այս խօսքերը նաեւ կը յիշեցնէ Քրիստոսի այն խօսքը, որ կ'ըսէ. «Ես եկայ, որպէսզի կեանք ունենաք, եւ առաւել կեանք»: Ահա Աստուծոյ փրկածն ալ այդ է առաւել կեանք:

Այս բոլորը պատահեցան, «Որովհետեւ թագաւորը Տիրոջ վստահեցաւ, անոր համար ալ Բարձր-եալին ողորմութեամբը պիտի չսասանի»: Ահա 8-12 համարները կը ներկայացնեն այս անգամ երբ թագաւորը վերստին յայտարարուի, թշնամիները թոնիրի վերածելու, բարկութեամբ կլլելու, կրակով սպառելու, անոնց ծնունդները վերացնելու, անոնց սերունդը բնաջնջելու մարդկութեան մէջէն: Կրնայ ծանր արտայայտութիւն թուիլ, սակայն խորքը կը վերաբերի չարին ու անոր սերունդին, այնպէս ինչպէս կը կարդանք Յայրնութիւն Յովհաննու գիրքին մէջ, երբ վերջին թշնամին Չարը, պիտի խորտակուի, երբ Քրիստոս Իր փառքովը յայտարարուի: Որովհետեւ, վերջ ի վերջոյ, պատերազմը, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ աներեւոյթ թշնամիին դէմ է: Մեր պատերազմը մարմնի եւ արիւնի դէմ չէ: Տակաւին, պատերազմը որ Աստուած Ինք է որ կը սող խորքին մէջ, Քրիստոսով, որ կատարեց Իր խաչելութեամբ, ուր Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Մահովը, մահը կոխկրպեց, եւ Իր յարութեամբը մեզի նոր կեանք պարգեւեց»: Եւ կ'աւելցնէ ըսելով. «Մահ, ուր է յաղթանակը, ուր է խայթոցը»: Անոր համար ալ, երբ Քրիստոս խաչին վրայ, իր վերջին բառերն էին՝ «Ահա ամէն ինչ կատարուեցաւ», իր լրումին հասաւ: Ահա Աստուծոյ յաղթանակի դրօշը: Հերաքրքրականօրէն, նաեւ երբ կը փեսանք պատկերներ, ուր նկարագրուած Քրիստոսի յարութեան դէպքը, Քրիստոսի ձեռքին դրօշը, որ ճերմակ ու անոր վրայ խաչին նշանը: Ահա այս է Աստուծոյ յաղթանակի դրօշը, Իր պարգեւած փրկութիւնը որ կատարուեցաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալովը, ու Անոր խաչութեամբ, թաղմամբ, ու մանաւանդ՝ յարութեամբ:

Ահա այդ բոլորի համար, անգամ մը եւս Աստուծոյ ժողովուրդը կը խնդրէ Տիրոջմէն, ըսելով. «Ել Տէր, ցոյց փութ գորութիւնդ, եւ մենք երգով ու նուագով պիտի ներբողենք հզօր գործերդ»: Այո, յաճախ, այնպէս կը կարծուի, որ Տէրը լուր է, անգօր է, անփրկեալ է, կամ անպարբեր այս բոլոր եղածներուն, մոռնալով սակայն, որ Ան կը համբերէ, մինչէ որ հասնի ժամանակը: Որուն համար, մենք որպէս մարդ արարածներ, յաճախ կը դժգոհինք, կ'ընդվզինք, կը յուսահարինք, սակայն Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ ըսելով. «Այս բոլորը ցոյց կու տան Աստուծոյ համբերապարտութիւնը», բայց երբ հասնի պահը, ուր այս անգամ անակնկալի պիտի մարմնուին Աստուծոյ թշնամիները, բայց անոնք որոնք հաւաքքով, վստահութեամբ ու հաւաքարմութեամբ Աստուծոյ կապուած են, անոնք համբերութեամբ պիտի սպասենք այդ մեծ գալուստին: Անոր համար ալ Քրիստոս կ'ըսէ. «Ով որ մինչեւ վերջ համբերէ, անկեալ պիտի փրկուի»: